

## «ՎՐԱՅ ԶԵԶ ՓԱՄԻՍԵՑԻՈՑ ԿԵՂԾԱԽՈՐԱՑ»

«Մշակի» 189 համարում «Դիսցիպլինայի բացակայութիւն» վերնագրով մի յօդուած է լոյս տեսել, որի հեղինակը իւր ահից ծածկուել է Հօ՛ կեղծանուան տակ: Պ. Հօ՛-ն Համբարձման հողակոշտի (այլ ոչ սարի) գլխից «կարգապահութեան», «դիսցիպլինայի», վկրօնաւորների բարոյականութեան» վրայ խրատական ճառ է ասում:

«Թեմակալ առաջնորդը հարկաւոր է համարել պատժել Մատինեան անունով քահանայի: Քահանան անհնազանդ է գըտնուել կրել առաջնորդական պատիժը. նա համարձակուել է դիմել Մինօդի արդարադատութեանը. իսկ վերջինս «չնորհիւ ապօրինի միջնորդութիւնների» հրամայում է առաջնորդին անցագիր տալու մեղադրուած քահանային էջմիածին գնալու և ինքնիրեն պաշտպանելու համար: Եւ որ գլխաւորն է ինձ համար՝ «Տէր Գիւտեր պակաս չեն ապօրինի միջնորդութիւնների համար», խեղդուած կոկորդով ասում է պ. Հօ՛-ն:

Ամբողջ հատուածի անիմաստ իմաստը այս է. կարգապահութեան անկումն անբարոյականացրել է մեր «կրօնաւորական դասակարգին», յանցաւորը անպատիժ է մնում և պատճառը «Տէր Գիւտերի (իմա իմ) ապօրինի միջնորդութիւններն են»:

Ես չգիտեմ «Մշակ» թերթի աշքակապութեան այդ նոր նմուշի վրայ զարմանամ, թէ պ. Հօ՛-ի անամօթ զրպարտութեան թարմ նմուշի վրայ:

Մենք տասնեակ տարիներ անարգանք ու արհամարհանք ենք կարդացել «Մշակի» նեղլիկ էջերում կրօնաւորութեան հասցէին և միշտ ներբողներ ըմբուտ՝ իրենց իշխանութիւնը բանիւ ու գրով արհամարհող կրօնաւորների հասցէին: «Մշակն» է հանդէս բերել եկեղեցական կեանքում անհնազանդութեան ողին: Անկարգութեան կօրիֆէյները «Մշակի» ծափահարութեամբ են շշմել միշտ և մոռացել իրենց կոչումը. և այժմ, ով զարմանք, նոյն «Մշակի» էջերում եկեղեցական կարգապահութեան նախանձախնդրութեան վրայ ճառ ենք կարդում: Աչքաշ կապութիւն չէ, բայ ի՞նչ է: Հենց նոյն իսկ Հօ՛-ի յօդուածում նենդաւոր ձեռքով չէ սերմանւում ըմբուտութեան ողին եկեղեցականութեան մէջ. Ի՞նչ է նշանակում յիշել մի ինչ որ ըմբուտութեան օրինակ, երբ ստորադրեալ առաջնորդը արհամարհելով Մինօդի կարգադրութիւնը իւր թեմից հանելով է պատժում մի քահանայի: Նոյնանման դէպք յառաջ բերելու մի դաս չէ այս:

Վերջապէս Ի՞նչ անբարոյականութիւն է այստեղ, երբ մի մեզադրեալ քահանայ, զանազան միտումնաւոր միջնորդութիւնների շնորհիւ սոսկալի կերպով զրպարառուած է համարում իրեն և արդարութիւն չտեսնելով մերձաւոր ատենում, բարձրագոյն ատեանն է դիմում և դատ խնդրում. հապա էլ ինչն էտ համար են սահմանուած բարձրագոյն ինստանցները: Միայն բացարձակ խաւարամտութիւնը և խղճի ազատութեան բռնաբարութիւնը կարող են արգելել, որ մարդիկ ինքնապաշտպանութեան դիմեն:

Սակայն գանք այն ծանր զրպարտութեանը, որ պ. Հօ՞-ն իւր վարժ շրթունքներից թափում է ինձ վրայ: «Ճէր Գիւտեր պակաս չեն ապօրինի միջնորդութիւնների համար»:

Զեզ, Սրբազնագոյն Հայրապետ, Զեզ, Սինօդական սրբազան հայրեր, Զեզ, Ո. Էջմիածնի միաբանութիւն, Զեզ, Սինօդի պ. դատախազ, Զեզ բոլորիդ եմ խնդրում, որ հրապարակով վկայէք թէ մո մէկիդ եմ խնդրել կամ միջնորդել Մատինեան քահանայի համար: Եւ ո՞չ մէկին: Միայն պ. Հօ՞-ն է որ ատելութեամբ լցուած անամօթ կերպով պղտոր աղքիւրներից քաղելով իւր պաշարը, անզգամին յատուկ լեզուագարութեամբ զրպարտում է ինձ: Զրպարտում են և սինօդական սրբազան հայրերը, որոնք պ. Հօ՞-ի կարծիքով «ապօրինի միջնորդութիւնների» կարօտ են դատ անելու համար: Բայց մի վայրկեան ենթադրենք, որ մի յանցագործ ու գղջացած քահանայ իմ դուռս բաղխէր և իմ օգնութիւնը խնդրէր իւր անարգուած պատուի գործում: Արդեօ՞ք ես իրաւունք չունիմ իրեւ մարդ, իրըև քահանայ գութ ունենալ դէպի սխալական յանցաւորը և խնդրել առաջնորդին, Սինօդին, Վեհ. Հայրապետին, որ գթալով դատեն ծայրայեղ անարգուածին: Մի՞թէ այդ իրաւունքը վերապահուած է միարև «Ծշակի» խմբագրութեան ամենազօր և ամենակեր անդամներին, իմ դուռս միշտ բաց է եղել ոչ միայն տառապեալ քահանաների և ժողովրդի, այլև նման բարձրաստիճան եկեղեցականների առաջ, որոնց նոյն ոգով ծառայութիւններ են մատուցել և մսիթարել:

Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:

Ես իմ խօսքս առ այժմ՝ վերջացրի իսկապէս, բայց մի փոքրիկ յաւելուած:

Եթէ Մատինեան քահանան այդ աստիճան ընկած, անբարոյական է, որպէս տարածուած է ժողովրդի մէջնոյնիսկ պաշտօնական մարդկանց շրթունքներով՝ թող խաչուի. միայն պատիճն է նրա բաժինը, եկեղեցին չպէտք է հանդուրժէ այդ-

պիսի արարքներ։ Բայց, զարմանալին այն է, որ դեռ դատը չվերջացած՝ դատավարութեան ընթացքը իւր մանրամասնութեամբ յայտնի է ամբողջ Տփխիսին։ Կան յանցանքներ, որոնք աշխարհական ատեամներում դժոնփակ են քննուում։ Վրանք այն յանցանքներն են, որոնք պատուի դէմ են։ Հոգևոր առենում նման յանցանքները պիսի քննուին և անօրինուին ամենայն անշառութեամբ և գաղտնապահութեամբ։ Այս եղանակին հակառակ ընթացքը ինքնըստինքեան առաջ է բերում անհնազանդութեան ոդի կրօնաւորութեան մէջ, ձգում է կոչման վարկը և անբարոյականացնում։

Հարցնում ենք պ. Հօ՞-ին, ովքե՞ր են որ նման գաղտնիքները իրենց գաղտնարաններից հանում, տարածում են և եկեղեցու դիրքը նուաստացնում։

Այնուհետև, պատիւը՝ աստուածային այդ բարձրագոյն պարգևը խճքծելուց առաջ, դատաւորները պարտաւոր են ոչ միայն իրաւաբանական, այլ առաւելապէս բարոյական օրէնքներն ի նկատի ունենալ։ Այդ օրէնքների ամբողջութիւնը ամփոփուած է Աւետարանի անառակ կնոջ պատմութեան մէջ։ Շմ'կ որ իւրան աւելի արդար է համարում, ասում է Յիսուս, թող առաջին քարը նա ձգէ այս կնոջ վրայ։ Երբ դատական սեղանի վրայ չկայ բարոյական օրէնքի արձանացումն, առաջ է գալիս և դիսցիպլինայի բացակայութիւն, և անհնազանդութիւն և կատարեալ անբարոյականութիւն։

Ահա թէ ուր պիտի որոնել դիսցիպլինայի անկման պատճառները։

Իսկ եթէ պ. Հօ՞-ն կամենում է յիրաւի, որ եկեղեցականների վարկը տեղը մնայ, կարգապահութիւնը կատարեալ լինի, դորա համար կայ աւելի ճիշտ միջոց։ Թող պ. Հօ՞-ն իրեն և իւր նման Հօ՞-ներին խորհուրդ տայ, որ չշփոթեն կրօնաւորներին, գաղարեն նոցա մոլորեցնել շողոքորթի լեզուով, իսկ ետևներից նոցա «գող եւ աւազակ» չասեն։

Վերջացնելով այս անգամ, անշափ ուրախ կլինէի, եթէ անիրաւութիւնը առիթ չտար ինձ այս խնդրի առթիւ նորից գրիչ վերցնել և մի շարք դառն, խիստ դառն ճշմարտութիւններ հանդէս բերել։

Գիհի Տ. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ